ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2
«ՀՀՌՑ-ԳՀԱՊՁԲ-17/18» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի է ունեցել 21.11.2017թ. ժամը 12.00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝
Գնման Պատասխանատու /Գնահատման Աշխատակազմի Պատասխանատու՝ ԳՊ/ԳԱՊ/ Վ. Ավետիսյանը

Անդամներ՝
Գնման Պատասխանատու /Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ/ Բ. Ալեքսանյանը
Գնման Պատասխանատու /Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ/՝ Ա. Պետրոսյանը
Կ. Եսայանը
Ա. Համբարձումյանը

Հանձնաժողովի քարտուղար՝
Գնման Պատասխանատու /Մրցույթի համակարգող՝ ԳՊ/ՄՀմ/ Ա. Գալուստյանը

1. Տեղեկություն հայտերի բացման վայրի, օրվա և ժամի մասին

Ընդունել ի գիտություն, որ «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲ ընկերության /ՀՀՌՑ/ կարիքների համար համակարգիչների ձեռքերման նպատակով ս.թ. նոյեմբերի 14-ին էլեկտրոնային ARMEPS համակարգով հայտարարվել է «ՀՀՌՑ-ԳՀԱՊՁԲ-17/18» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ /Ընթացակարգ/: Հայտերը բացվել են էլեկտրոնային www.armeps.am կայքի միջոցով ՀՀՌՑ-ի վարչական շենքում, ք. Երևան, Նորք, Հովսեփյան 95 հասցեում, նոյեմբերի 21-ին, ժամը 12.00-ին:

2. Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները, տվյալները

N	Մասնակցի անվանումը	էլ. փոստի հասցեն	ՀՎՀՀ
1	«Կոմպմարկետ» ՍՊԸ	info@comp.am, compyrvn@mail.ru	02557321
2	«Ինո-Թեքնոլոջի» ՍՊԸ	info@itech.am	01570457
3	«Էդվարդ Քոմփյութերս» ՍՊԸ	meri@ognakan.am	00102216
4	«ՍԵԳ» ՍՊԸ	seg_tender@mail.ru	00878823

3. Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության և հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին

3.1 «Կոմպմարկետ», «Էդվարդ Քոմփյութերս», «ՍԵԳ» ՍՊ ընկերությունների կողմից ներկայացված հայտերում առկա են «ՀՀՌՑ-ԳՀԱՊՁԲ-17/18» ծածկագրով հրավերով (հրավեր) պահանջվող փաստաթղթերը և համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին:

3.2 «Ինո-Թեքնոլոջի» ՍՊ ընկերության կողմից ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը, բավարարում են հրավերով սահմանված պահանջներին, բացառությամբ հավելված 10-ով սահմանված հայտի ապահովման. վճարման պահանջագրով նշված գումարը չի կազմում մասնակցի կողմից ներկայացրած գնային առաջարկի 5 /հինգ/ տոկոսը

4. Մասնակիցների առաջարկած գները, նախահաշվային գինը

ՀՀ դրամ

Չ/հ	Ապրանքի անվանումը	նախահաշ. գինը, ներ ԱԱՀ	Կոմպմարկետ ՍՊԸ			ՍԵԳ ՍՊԸ	Էդվրդ Քոմփյութերս ՍՊԸ		
			առանց ԱԱՀ	ԱԱՀ	ընդհ. գինը	ընդհ. գինը*	առանց ԱԱՀ	ԱԱՀ	ընդհ. գինը
1	Համակարգիչ բոլորը մեկում (մոնոբլոկ)	650 000	245 000	49 000	294 000	643 000	415 000	83 000	498 000
2	Սեղանի համակարգիչ մոնիտորով	350 000	225 000	45 000	270 000	348 000	254 167	50 833	305 000
		Տուժանք 5%՝			28 200	49 550			40 150

* Մասնակիցը չի հանդիսանում ԱԱՀ վճարող

5. Հանձնաժողովը որոշեց

5.1 Ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (Կարգ) 40-րդ կետի 4-րդ ենթակետով՝ մերժել «Ինո-Թեքնոլոջի» ՍՊ ընկերության հայտը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0

5.2 Ղեկավարվելով Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետով՝

ա) «Կոմպմարկետ» ՍՊ ընկերությունը 1,2 չափաբաժիններով ճանաչել առաջին տեղը զբաղեցրած մասնակից,

բ) «Էդվարդ Քոմփյութերս» ՍՊ ընկերությունը 1,2 չափաբաժիններով ճանաչել երկրորդ տեղը զբաղեցրած մասնակից,

գ) «ՍԵԳ» ՍՊ ընկերությունը 1,2 չափաբաժիններով ճանաչել երրորդ տեղը զբաղեցրած մասնակից,

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0

5.3 Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հանձնաժողովը որոշեց ՀՀ ԿԱ Պետական եկամուտների կոմիտեից կատարել հարցում՝ «Կոմպմարկետ» ՍՊ ընկերության հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0

5.4 Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն ծանուցել առաջին տեղը զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով սույն արձանագրության 5.2 կետի ա) պարբերությամբ նշված չափաբաժիններով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ սահմանված՝ առաջարկվող ապրանքների անվանումները և տեխնիկական բնութագրերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0

5.5. Գնահատման նիստը հրավիրել ս.թ. նոյեմբերի 28-ին, ժամը 12.00-ին, ՀՀ, ք. Երևան, Նորք, Հովսեփյան 95 հասցեով:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0

Հանձնաժողովի

նախագահ՝ _____ Վ. Ավետիսյան

անդամներ՝ _____ Բ. Ալեքսանյան

_____ Ա. Պետրոսյան

_____ Կ. Եսայան

_____ Ա. Համբարձումյան

քարտուղար՝ _____ Ա. Գալուստյան